Հավելված N 1
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2022թ. օգոստոսի 05-ի N 101-Ա/1 հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ԵՌԱԿՈՂՄ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՌՈՒ-1-263-2024

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2016, 2020 ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍԱՆՁԱՁԵՐԾՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՁՈՐԱՑՐՎԱԾ ԳՈՐԾԱԶՈՒՐԿ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

---ք. Վանաձոր---
(կնքման վայրը)

«--16---» ---02--- 2024 թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության Վանաձորի տարածքային կենտրոնը, այսուհետ՝ Տարածքային կենտրոն, ի դեմս տնօրեն Լուսինե Աքմաքչյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, «Բիոնիկ» ՍՊԸ-ն, 09.06.04թ., 03Ա064940, գործունեության հասցեն Լոռու մարզ, գ.Դարպաս 3/32
(իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, պետական գրանցման օրը, ամիսը, տարեթիվը, պետական գրանցման վկայականի համարը, կամ ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գործատուի անունը, հաշվառման վայրը)

այսուհետ՝ Գործատու, ի դեմս տնօրեն Վարդան Եթիմյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից և Արկադյա Ավագիմյանը, անձնագիր AV0584736, տրված 07.06.2023, 070-ի կողմից, հաշվառված գ.Դարպաս 2-րդ փող., 7-րդ նրբ., 14 քոթեջ
(ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձի ազգանունը, անունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը, տալու օրը, ամիսը, տարեթիվը (կամ հանրային ծառայությունների համարանիշը), հաշվառման վայրը, իսկ ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ նաև ներկայացուցչի անունը, ազգանունը, լիազորագիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)

այսուհետ՝ Շահառու, մյուս կողմից, (բոլորը միասին համատեղ հիշատակման դեպքում, այսուհետ՝ Կողմեր), արտահայտելով միմյանց հետ համագործակցելու իրենց պատրաստակամությունը և ձգտումները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1179-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելվածի 2-րդ գլխով սահմանված պահանջները և Կողմերի միջև կայացած բանակցությունների արդյունքները, թղթային տարբերակով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ներքոհիշյալի վերաբերյալ:

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պայմանագրի առարկան Շահառուի մասնագիտական ուսուցման կազմակերպման համար Տարածքային կենտրոնի կողմից աջակցության տրամադրումն է՝ Գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղը համալրելու նպատակով:

2. Պայմանագրով Գործատուն պարտավորվում է իր կողմից ընտրված, իր պահանջներին առավելապես համապատասխանող Շահառուի մասնագիտական ուսուցման ավարտից հետո ստացված վկայականի հիման վրա ընդունել նրան աշխատանքի՝ Պայմանագրով սահմանված ժամկետով և պայմաններով, իսկ Տարածքային կենտրոնը պարտավորվում է ուսուցման ամբողջ ժամանակահատվածում Շահառուին վճարել ուսման վարձի փոխհատուցում և կրթաթոշակ, իսկ Գործատուին՝ գումար՝ Պայմանագրով սահմանված չափով և ժամկետում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Տարածքային կենտրոնը պարտավորվում է՝

1) ըստ անհրաժեշտության, Գործատուին և Շահառուին տրամադրել համապատասխան խորհրդատվություն՝ 2016, 2020 և 2022 թվականներին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած, ինչպես նաև 2020 թվականից հետո ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում իրականացվող և Պայմանագրով սահմանված՝ Շահառուի մասնագիտական ուսուցման կազմակերպման, ինչպես նաև Շահառուի աշխատանքի տեղավորման համար Գործատուին աջակցություն տրամադրելուն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում Գործատուի և Շահառուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

2) ուսուցման ամբողջ ժամանակահատվածում, մասնագիտական ուսուցման իրականացման պայմանագրի հիման վրա, շահառուին վճարել ուսման վարձի փոխհատուցում և կրթաթոշակ՝ Պայմանագրի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված չափով, կարգով և ժամկետում,

3) Շահառուի կողմից մասնագիտական ուսուցման դասընթացի նախորդ ամսվա ուսման վարձի վճարումը հավաստող փաստաթուղթը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Շահառուի բանկային հաշվեհամարին փոխանցել ուսման վարձի փոխհատուցումն ու կրթաթոշակը,

4) Շահառուի հետ կնքված աշխատանքային պայմանագրի պատճենը Գործատուի կողմից ներկայացվելուց հետո, Գործատուին վճարել գումար՝ Պայմանագրի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված չափով, կարգով և ժամկետում,

5) ամսական առնվազն մեկ անգամ իրականացնել Շահառուների մասնագիտական ուսուցման դասընթացներին մասնակցության մոնիթորինգ՝ նախարարի կողմից սահմանված մոնիթորինգի և գնահատման կարգին համապատասխան,

6) չհրապարակել և (կամ) երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Գործատուի և Շահառուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

4. Տարածքային կենտրոնն իրավունք ունի՝

1) Պայմանագրով և Որոշման հավելվածի 16-րդ կետում նշված դեպքերում և կարգով՝ Գործատուից ստանալ հատուցում՝ Գործատուի առաջարկությամբ կազմակերպված մասնագիտական ուսուցման ընթացքում Շահառուին որպես ուսման վարձի փոխհատուցում և կրթաթոշակ վճարված գումարի չափով,

2) իրականացնել Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

5. Գործատուն պարտավորվում է՝

1) մասնագիտական ուսուցման վկայականն ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով, Շահառուի հետ կնքել նորմալ աշխատաժամանակի ռեժիմով (մեկ դրույքով) աշխատանքային պայմանագիր՝ առնվազն մեկ տարի ժամկետով, իսկ սեզոնային աշխատանքի դեպքում՝ առնվազն 12 ամիս ժամկետով,

2) աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, աշխատանքային պայմանագրի պատճենը կամ էլեկտրոնային պատկերատպված (սքանավորված) տարբերակը ներկայացնել Տարածքային կենտրոն,

3) աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում Շահառուի համար ապահովել աշխատանքային բնականոն պայմաններ, աշխատանքային ունակությունների և կարողությունների զարգացմանը նպաստող անհրաժեշտ միջավայր,

4) աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում չվատթարացնել Շահառուի աշխատանքի էական պայմանները կամ Շահառուի համար չսահմանել առավել նվազ բարենպաստ պայմաններ այն պայմանների համեմատ, որոնք նախատեսվելու են աշխատանքային պայմանագրով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերի,

5) մինչև յուրաքանչյուր ամսվա 25-ը Տարածքային կենտրոն ներկայացնել տեղեկատվություն՝ նախորդ ամսվա համար Շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկի, դրոշմանիշային վճարի և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարի վճարման վերաբերյալ,

6) Պայմանագրով և Որոշման հավելվածի 16-րդ կետով սահմանված դեպքերում և կարգով՝ Տարածքային կենտրոն վերադարձնել Շահառուին որպես ուսման վարձի փոխհատուցում և կրթաթոշակ վճարված գումարը:

6. Գործատուն իրավունք ունի՝

1) պահանջել Տարածքային կենտրոնից չմիջամտելու Գործատուի և Շահառուի միջև ծագած աշխատանքային հարաբերություններին և Գործատուի կողմից իրականացվող գործունեությանը,

2) Տարածքային կենտրոնից պահանջելու տրամադրել համապատասխան խորհրդատվություն՝ իրականացվող ծրագրի շրջանակներում Գործատուի և Շահառուի իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ,

3) Պայմանագրի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված չափով, կարգով և ժամկետում Տարածքային կենտրոնից ստանալ ծրագրի շրջանակում Շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարը փոխհատուցելու նպատակով իրեն տրամադրվող գումարը,

4) Տարածքային կենտրոնից պահանջել չհրապարակել և (կամ) երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում Տարածքային կենտրոնին հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Գործատուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի,

5) իրականացնել Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

7. Շահառուն պարտավորվում է՝

1) Տարածքային կենտրոն ներկայացնել ուսումնական հաստատության կամ Գործատուի հետ կնքված մասնագիտական ուսուցման իրականացման պայմանագրի պատճենը,

2) բանկային հաշիվ չունենալու դեպքում մասնագիտական ուսուցման դասընթացում ընդգրկվելուց հետո եռօրյա ժամկետում առևտրային բանկում բացել բանկային հաշիվ և Տարածքային կենտրոն ներկայացնել հայտարարություն իր բանկային հաշվի տվյալների մասին,

3) մինչև մասնագիտական ուսուցման դասընթացի յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա երրորդ աշխատանքային օրը առձեռն կամ էլեկտրոնային եղանակով Տարածքային կենտրոն ներկայացնել նախորդ ամսվա ուսման վարձի վճարումը հավաստող փաստաթուղթը,

4) Տարածքային կենտրոն ներկայացնել տեղեկանք ուսումնական հաստատությունից՝ ուսուցման դասընթացին մասնակցության օրերի վերաբերյալ,

5) մասնագիտական ուսուցման դասընթացն ավարտելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ստացած վկայականի պատճենն առձեռն կամ էլեկտրոնային եղանակով ներկայացնել Գործատուին և Տարածքային կենտրոն՝ ուսումնական հաստատությունում մասնագիտական ուսուցում անցնելու դեպքում և Տարածքային կենտրոն՝ Գործատուի մոտ մասնագիտական ուսուցման իրականացման դեպքում:

8. Շահառուն իրավունք ունի՝

1) ընդգրկվելու մինչև հինգ ամիս տևողությամբ իրականացվող մասնագիտական ուսուցման համապատասխան դասընթացում,

2) ուսուցման ամբողջ ժամանակահատվածում ստանալ ուսման վարձի փոխհատուցում և կրթաթոշակ՝ Պայմանագրի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված չափով, կարգով և ժամկետում,

3) իրականացնել Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Պայմանագրի համաձայն՝

1) Շահառուին ուսուցման ամբողջ ժամանակահատվածում վճարվում է ուսման վարձի փոխհատուցում ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր ամսվա համար առավելագույնը 50000 (հիսուն հազար) դրամի չափով.

2) Շահառուին կրթաթոշակ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով, ընդ որում՝ կրթաթոշակը վճարվում է տվյալ ուսումնական ամսվա ընթացքում շահառուի՝ ուսուցմանը մասնակցած օրերին համապատասխան,

3) Գործատուին գումար՝ առավելագույնը 50000 (հիսուն հազար) դրամի չափով, մեկ տարի ժամկետով, ամսական կտրվածքով՝ Շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարը փոխհատուցելու նպատակով:

10. Պայմանագրի 9-րդ կետում նշված դրամական միջոցները Գործատուին և Շահառուին են վճարվում Որոշման հավելվածի 2-րդ գլխով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

IV. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

11. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլ արտակարգ և անկանխատեսելի հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երկու ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

V. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12. Գործատուն Պայմանագրով և Որոշման հավելվածի 16-րդ կետով սահմանված դեպքերում պարտավորվում է Տարածքային Կենտրոն վերադարձնել Պայմանագրի 9-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված և Տարածքային կենտրոնի կողմից վճարված գումարը:

13. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում են գրավոր կերպով՝ ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու, կամ էլեկտրոնային փոստի միջոցով, կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

VI. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

14. Կողմերը հավաստիացնում և երաշխավորում են, որ

1) Պայմանագիրը համարվում է պատշաճ կերպով կնքված և իրենց համար ունի պարտադիր իրավաբանական ուժ,

2) Պայմանագիրն իրենց համար հանդիսանում է իրական, պարտադիր և իրագործվող,

3) պատրաստ են իրականացնել Պայմանագրից բխող իրենց պարտավորությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները,

4) Պայմանագրի կնքումը և կատարումը չի խախտում որևէ այլ պայմանագրի պահանջ, որում Կողմերը միասին կամ յուրաքանչյուրն առանձին հանդես են գալիս որպես կողմ, ինչպես նաև երրորդ անձանց որևէ իրավունք,

5) Պայմանագիրը համապատասխանում է Կողմերի կամահայտնությանը, իրենց համար պարզ և ընդունելի են Պայմանագրի կնքման և դրա չկատարման իրավական հետևանքները:

VII. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

15. Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

16. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

17. Պայմանագիրը հանդիսանում է Կողմերի միջև լիիրավ համաձայնություն՝ դրանում արտացոլված դրույթների վերաբերյալ:

18. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Պայմանագրի մեկնաբանման, ինչպես նաև այլ պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

19. Կողմերի միջև այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում Պայմանագրով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

20. Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ Պայմանագրով:

21. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի (նրանց լիազոր ներկայացուցիչների) կողմից:

22. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է Որոշման հավելվածի 2-րդ գլխում նշված պահանջներին համապատասխան: Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը Կողմերին չի ազատում Պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունները պատշաճ կատարելու պարտավորությունից:

23. Պայմանագիրը կազմված է հայերենով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երեք օրինակներից, որոնցից Տարածքային կենտրոնին, Գործատուին և Շահառուին տրամադրվում է մեկական օրինակ:

IX. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տարածքային կենտրոն՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
միասնական սոցիալական ծառայության Վանաձորի
տարածքային կենտրոն
Գտնվելու վայրը –ՀՀ ք. Վանաձոր, Նժդեհի 14----------
Հեռ. ---060-652778----------
Էլ. փոստ. -------anahit.mkhitaryan@socservice.am----------
Հ/հ ----------
ի դեմս տնօրեն Լուսինե Աբրահամյանի

_____
(ստորագրությունը)

Կ.Տ. --16-- ------02------ 2024 թ.

Գործատու

__«Բիոնիկ» ՍՊԸ___
(գործատուի անվանումը)
Գտնվելու վայրը ---Լոռու մարզ, գ.Դարպաս 3/32 -----
Հեռ. ---055157777, 098156060----------
Էլ. փոստ. ----bionik.69@mail.ru----------
Հ/հ -------- 220053334250000 ----------
ՀՎՀՀ ------ 06934589----------
ի դեմս ----տնօրեն Վարդան Եթիմյանի

_____
(ստորագրությունը)

Կ.Տ. --16--, ------02------- 2024թ.

Շահառու

____ Ավագիմյան Արկադյա_____
(ազգանունը, անունը)

Բնակության վայրը ---- գ.Դարպաս
2-րդ փող., 7-րդ նրբ., 14 քոթեջ--------
Հեռ.----- 098338594, 097338599------
Էլ. փոստ. ----------

_____
(ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ ներկայացուցչի անունը, ազգանունը)

_____
(շահառուի կամ ներկայացուցչի ստորագրությունը)

---16--- ------02------- 2024թ.